



Ստրասբուրգ, 24 նոյեմբերի, 2011թ.

CCPE (2011)6

ԵՎՐՈՊԱՅԻ ԴԱՏԱԽԱՁՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
(CCPE)

Կարծիք թիվ 6(2011)

**«Դատախազների և քրեակատարողական հաստատությունների վարչակազմի միջև
փոխհարաբերությունների վերաբերյալ»**

Ոչ պաշտոնական թարգմանություն

Ընդունված՝ CCPE 6-րդ լիագումար նիստին

(Ստրասբուրգ, 24-25 նոյեմբերի, 2011թ.)

Թարգմանված՝ ՀՀ գլխավոր դատախազությունում

(Երևան, փետրվար, 2012թ.)

I. Ներածություն

1. Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը (այսուհետ՝ ԵԴԽԽ) ստեղծվել է Նախարարների կոմիտեի կողմից 2005թ.-ին՝ դատախազությանն առնչվող հարցերով կարծիքներ նախապատրաստելու նպատակով և ի կատարումն քրեական արդարադատության ոլորտում դատախազության դերի վերաբերյալ Նախարարների կոմիտեի Թիվ (2000)19 հանձնարարականի:

2. 2011թ.-ին Նախարարների կոմիտեն ԵԴԽԽ-ին հանձնարարել էր ուսումնասիրել դատախազների և քրեակատարողական հաստատությունների վարչակազմի միջև փոխհարաբերություններին առնչվող հարցերը՝ ի կատարումն Նախարարների կոմիտեի «Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ (2006)2 հանձնարարականի պահանջների:

3. ԵԴԽԽ-ն սույն Կարծիքը կազմել է ելնելով 25 պետությունների պատասխաններից՝ տրված ԵԴԽԽ կողմից կազմված հարցաշարին: Պատասխանները վկայում են, որ դատախազների և քրեակատարողական հաստատությունների միջև փոխհարաբերությունները տարբեր են նպատակների, բովանդակության և կառուցվածքի առումով. որոշ համակարգերում նմանատիպ փոխհարաբերությունները բացակայում են, այլ համակարգերում դրանք կարող են լինել բավականին սերտ, համակարգված և դատախազությունների կողմից վերահսկվող: Իրավական պատմությունը, ազգային մշակույթը և արդարադատության ինստիտուտների տարբեր զարգացումները բացատրում են իրավական համակարգերում առկա տարբերությունները:

Կարծիքի շրջանակները

4. Սույն Կարծիքի դրույթները կիրառելի են այն անդամ-պետություններում, որտեղ դատախազները որոշակի դեր ունեն քրեակատարողական ոլորտում: Այն պետություններում, որտեղ դատախազները նմանատիպ լիազորություններով օժտված չեն, ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության լիազորություններով պետք է օժտված լինի մեկ այլ մարմին:

5. Կարծիքը առնչվում է փոխհարաբերություններին դատախազների և քրեակատարողական հաստատությունների միջև, որտեղ պահվում են «անձինք, ովքեր դատական մարմնի

որոշմամբ նախնական կալանքի տակ են վերցվել կամ դատապարտումից հետո գրկվել ազատությունից», ինչպես սահմանված է ԹԻՎ (2006)2 հանձնարարականով:

Կարծիքի նպատակները

6. Ազատագրկման մեջ գտնվող անձանց վիճակը ռիսկեր է պարունակում, քանի որ նրանք գտնվում են փակ համայնքում և նրանց հիմնարար իրավունքները կարող են ոտնահարվել:

7. ԵԴԽԽ-ն նպատակ ունի մշակել ազատությունից գրկված անձանց նկատմամբ դատախազի գործունեության ուղենիշեր, մասնավորապես.

- սահմանել գործունեության ոլորտները, այդ թվում՝ բանտային պայմանները այնպես, որ ապահովվի օրենքի և մարդու իրավունքները պաշտպանությունը, խրախուսվի ազատությունից գրկված անձանց ուղղվելը և ստեղծվեն լավագույն պայմաններ դեպի ազատ հասարակություն նրանց վերադառնալու համար,

- բարձրացնել համապատասխան մարմինների իրազեկվածությունը ազատությունից գրկված անձանց վիճակի մասին, այդ թվում՝ դատախազությունների աշխատակիցների, որպեսզի նրանք կարողանան առավել արդյունավետ իրականացնել ազգային օրենսդրությամբ տվյալ ոլորտում իրենց վերապահված լիազորությունները,

- ընդգծել հիմնարար սկզբունքները և ԹԻՎ (2006)2 հանձնարարականի կողմից սահմանվող մի շարք անհրաժեշտ գործողություններ, որոնք կապահովեն իրազեկվածությունը և օրենսդրության համապատասխանությունը այդ սկզբունքներին:

Հիմնական սկզբունքներ

8. Յուրաքանչյուր իրավական պետությունում քրեակատարողական ոլորտում պետք է գործեն զսպումների և հակակշիռների, իրականացման և վերահսկողության մեխանիզմներ: Սա նշանակում է, որ բանտերում և պատիժների իրականացման հարցերում պետք է գործեն մշտադիտարկման և վերահսկողության արդյունավետ մեխանիզմներ:

9. Այդ նպատակով անդամ-պետությունները պետք է ստեղծեն անկողմնակալ, օբյեկտիվ և պրոֆեսիոնալ մարմին, որը պարբերաբար կզբաղվի մշտադիտարկմամբ և վերահսկողությամբ, ինչպես նաև համակարգված ձևով կիրականացնի ազատագրկման տեսքով պատիժների կիրառումը: Որոշ անդամ-պետություններում այս խնդիրների արդյունավետ լուծումը կարող է իրականացվել դատախազներին քննարկվող ոլորտում բոլոր

լիազորություններով օժտելու միջոցով: Այլ պետություններում, այս խնդիրները կարող են լուծվել արդարադատության մեկ այլ մարմնի կողմից կամ քրեակատարողական հաստատություններից անկախ մարմնի կողմից:

10. Բացի այդ, հատուկ ուշադրություն պետք է դարձնել քրեակատարողական հաստատությունների գործունեության նպատակներին և խնդիրներին և դատախազությունների գործառույթներին և լիազորություններին այն պետություններում, որտեղ նրանք դեր ունեն պատիժների կիրառման օրինականության ապահովման կամ նախնական կալանքի տակ գտնվող և պատիժը կրող անձանց իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ոլորտում:

11. Դատախազները, երբ իրականացնում են կամ հանձնարարում են պատիժների կիրառումը կամ կալանավայր տեղափոխելը, որի մասին որոշումը կայացնում է համապատասխան իրավասու մարմինը, ուղղակիորեն գործ ունեն անձին ազատությունից զրկելու հետ: Սույն գործունեության շրջանակներում դատախազները պետք է միշտ առաջնորդվեն օրինականության, անկողմնակալության և ազդեցություններից զերծ մնալու սկզբունքներով: Իրենց գործառույթները իրականացնելիս դատախազները պետք է խուսափեն ցանկացած հիմքով ցանկացած խտրականությունից՝ սեռային, ռասայական, գույնի, լեզվի, կրոնական, սեռական կողմնորոշման, քաղաքական կամ այլախոհության, ազգային կամ սոցիալական պատկանելիության, ազգային փոքրամասնությանը պատկանելու, սեփականության, ծննդի կամ այլ կարգավիճակի հիմքով /խտրականության բացառման սկզբունք/:

Հղումները

12. Բանտարկման հարցերի ոլորտում ԵԳԽԽ-ն հղում է կատարում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին հռչակագրին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին: Մասնավորապես, ԵԳԽԽ ընդգծում է Կոնվենցիայի խոշտանգումները և անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող այլ վերաբերմունքը արգելող 3-րդ հոդվածի, անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի պաշտպանության վերաբերյալ 8-րդ հոդվածի դրույթների և արդյունավետ պաշտպանության իրավունքը սահմանող 13-րդ հոդվածի դրույթների կարևորությունը:

13. ԵԴԽԽ-ն, մասնավորապես, հաշվի է առնում «Քրեական արդարադատության ոլորտում դատախազների դերի վերաբերյալ» ԹԻՎ (2000)19 հանձնարարականը և «Եվրոպական բանտային կանոնների մասին» ԹԻՎ(2006)2 հանձնարարականը, որը նախատեսում է այն կանոնները, որոնք պետք է հաշվի առնվեն անձին ազատությունից զրկելու ժամանակ (հիմնական սկզբունքները, ազատագրկման պայմանները, առողջությունը, լավ վիճակը, դեկավարումը և աշխատակազմը, տեսչական ստուգումները և մշտադիտարկումը, չդատված ազատությունից զրկված անձանց և պատիժը կրող անձանց իրավունքները), ինչպես նաև Եվրոպայի խորհրդի այլ փաստաթղթերը:

14. ԵԴԽԽ հաշվի է առել նաև ՄԱԿ-ի համապատասխան փաստաթղթերը, ինչպես նաև մի շարք այլ իրավական գործիքներ:

II.ԴԱՏԱԽԱՋՆԵՐԻ ԴԵՐԸ

Ա. Նախնական կալանքը

15. Քրեական գործերի քննության շրջանակներում նախնական կալանքը պետք է ունենա խելամիտ հիմնավորումներ, որոնք նախատեսված են օրենքով և համապատասխանում են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների կոնվենցիային և Դատարանի նախադեպային իրավունքին:

16. Այն պետություններում, որտեղ դատախազները որոշակի դեր ունեն բանտային հարցերում, նրանք պետք է.

- հսկողություն իրականացնեն նախաքննական մարմինների կողմից ձերբակալված անձանձ իրավունքների պաշտպանության նկատմամբ՝ Կոնվենցիայով և ազգային օրենսդրությամբ նախատեսված կարգով (օրինակ, ձերբակալման պատճառները իմանալու իրավունքը, ձերբակալման մասին հարազատներին տեղյակ պահելու իրավունքը, պաշտպանության իրավունքը, այդ թվում՝ փաստաբան ունենալու իրավունքը և այլն), քայլեր ձեռնարկեն նման իրավունքների ոտնահարումը կանխելու և ոտնահարման համար պատասխանատու անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ,
- համապատասխան քայլեր ձեռնարկեն ձերբակալված անձին անմիջապես ազատ արձակելու ուղղությամբ, եթե ազատագրկման պայմանները չեն կատարվում (օրինակ, երբ ձերբակալությունը կատարվել է առանց թույլտվության),
- հսկողություն իրականացնեն դատավորի կողմից որոշված՝ մինչդատական կալանքի կիրառման օրինականության նկատմամբ:

Բ. Պատիժների կիրառումը

17. Ազատագրկման կիրառումը ենթադրում է անձին իր հիմնարար ազատություններից մեկից՝ ազատության իրավունքից զրկելը:

18. Այդ պատճառով դատախազները, եթե սույն ոլորտում օժտված են որոշակի գործառնություններով, պետք է որոշակի միջոցներ ձեռնարկեն, որպեսզի.

- պատժի կիրառումը իրականացվի վաղեմության ժամկետների շրջանակներում, անկողմնակալ և անկախ դատական իշխանության կողմից վերջնական որոշում կայացնելուց հետո,

- պատժի բնույթը և/կամ չափը ամբողջովին համապատասխանի կայացված որոշմանը,

- պատժի մասին որոշման հիմքերը և պայմանները պատշաճ կերպով ներկայացվեն դատապարտված անձին:

19. Մինչև պատիժը կիրառելը քրեակատարողական հաստատություններից անկախ մարմինը պետք է հաստատի պատժի կիրառման մասին որոշման օրինականությունը:

20. Իշխանությունները, որոնք լիազորված են պատժի կիրառման իրավասությամբ, պետք է.

- իրավական պայմաններ ստեղծեն պատժի կիրառման ընթացքում մարդու արժանապատվությունը հարգելու համար: Հատուկ դեպքերում (փախուստի ռիսկ կամ անվտանգության պահանջներ) պետք է արագ արձագանքեն դատապարտյալի կամ նրա փաստաբանի կամ քրեակատարողական հաստատության վարչակազմի կողմից առաջադրվող հարցերին և ներկայացնեն իրենց դիրքորոշումը հիմնավորող փաստաթուղթեր:

- ընթացք տան և փոխանցեն իրավասու մարմնին, առանց հետաձգելու, ցանկացած հայց, որը կարող է որոշակի ազդեցություն ունենալ պատժի կիրառման վրա (օրինակ, համաներման խնդրանքը, ազատ արձակելու մասին խնդրանքը):

21. Կախված ազգային իրավական համակարգի տեսակից, դատախազները կարող են ակտիվ մասնակցություն ունենալ դատապարտյալի նկատմամբ պայմանական ազատագրկման կիրառմանը և ազատ հասարակություն նրանց վերադարձին:

Գ. Բանտային ռեժիմը

22. Թեև Եվրոպական բանտային կանոնները չեն հստակեցնում դատախազների կամ այլ հսկող մարմինների դերը և գործառույթները ազատագրկման կիրառման հարցերում, դատախազները, եթե նմանատիպ լիազորություններով օժտված են, պետք է հստակ հսկողություն իրականացնեն այս կանոնների իրականացման նկատմամբ: Կարևոր է, որպեսզի նրանք՝ իրենց իրավասությունների շրջանակներում, համոզվեն, որ ազատագրկման մեջ գտնվող անօրինակ իրավունքները լրիվ և արդյունավետ պաշտպանվում են՝ բանտերում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը ապահովելու նպատակով:

23. Անձին ազատությունից զրկելը չպետք է նվաստացնի նրա արժանապատվությունը և սահմանափակի ազատությունից զրկելու բացասական ազդեցությունը՝ իրականացնելով հասարակության պաշտպանությունը:

24. Եթե դատախազները ունեն քրեակատարողական հաստատություններում իրավական կարգավորման մեխանիզմների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորություններ, նրանք պետք է.

- պարբերաբար այցելություններ կատարեն քրեակատարողական հիմնարկներ,
- կարողանան ստանալ բանտային վարչակազմի կողմից ընդունված ցանկացած փաստաթուղթ, թղթապանակ, գրավոր ցուցում և որոշում,
- առանց երրորդ անձանց ներկայության, ազատ հանդիպեն ազատությունից զրկված անձանց հետ,
- պահանջեն որոշակի բացատրություններ համապատասխան քրեակատարողական հիմնարկի աշխատակիցներից,
- ստուգեն ընթացակարգերի և որոշումների օրինականությունը, որոնք ընդունվում են կրթական մարմինների կողմից ի պաշտպանություն ինստիտուցիոնալ պաշտպանության և անվտանգ կրթության, կամ նախնական կալանքի կամ պատիժը կրելու վերաբերյալ ընդունված՝ Բանտային ծառայությունների հրամանների և որոշումների օրինականությունը,
- հսկողություն իրականացնեն տվյալ գործի շրջանակներում կիրառելի իրավական կարգավորման մեխանիզմները կիրառման նկատմամբ,
- եթե անձը ձերբակալվել է առանց թույլտվության, վերահսկեն, որպեսզի նա արագ ազատ արձակվի:

25. Ազատագրկման ընթացքում ցանկացած իրավական կարգավորման մեխանիզմի խախտման դեպքում, դատախազները, եթե ունեն նման լիազորություններ, պետք է

արձագանքեն իրավական դրույթները կատարելու հստակ պահանջով, եթե նույնիսկ դրա համար պահանջվում են լրացուցիչ ծախսեր: Անհրաժեշտության դեպքում, խախտումների համար պատասխանատու անձանց նկատմամբ դատախազները հարուցում են կարգապահական կամ քրեական վարույթներ:

Դ. Բանտերում տեղ գտած խախտումներին արձագանքելը (քրեական և կարգապահական հարցերով)

26. ԵԴԽԽ վկայակոչում է, որ դատախազը «իշխանության ներկայացուցիչն է, որը հասարակության անունից կամ հանրային շահից ելնելով, ապահովում է օրենքի կիրառումը այն դեպքերում, երբ տեղի է ունենում օրենքի խախտում, քրեական սանկցիա է կիրառում՝ հաշվի առնելով ինչպես անձի իրավունքները, այնպես էլ քրեական արդարադատության համակարգի արդյունավետությունը»: Պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն քրեակատարողական հաստատություններում դատախազների գործունեությունը ապահովելու ուղղությամբ:

27. Ազատագրկման մեջ գտնվող անձինք գտնվում են աստիճանակարգային ենթակայության և խոցելիության յուրատեսակ փոխհարաբերությունների մեջ: Այդ առումով կարևոր է, որպեսզի ազատագրկման վայրերը պաշտպանված լինեն քրեական իրավունքի խախտումներից և այնտեղ պաշտպանվեն մարդու իրավունքների և ազատությունների հիմնական սկզբունքները:

28. Բանտերում կատարվող բոլոր հանցագործությունները պետք է քնության ենթարկվեն հատուկ ուշադրությամբ՝ դրանք կանխարգելելու նպատակով:

29. Հանրային շահերից ելնելով՝ դատախազները, եթե օժտված են նման իրավասություններով, պետք է նախաձեռնեն նման օրինախախտումների քննությունը, հատկապես կոռուպցիայի կամ ձերբակալված անձանց նկատմամբ ճնշում գործադրելու և քրեակատարողական հիմնարկների աշխատակազմի կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերում:

30. Եթե բանտերում տեղի են ունեցել օրինախախտումներ, անդամ պետություններում պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկվեն՝ ապահովելու համար նախաքննական մարմինների կողմից նախաքննություն վարելը, առաջնորդելը կամ հսկողություն իրականացնելը, քննության արդյունքում քրեական հետապնդումը դատարանում շարունակելու մասին որոշում կայացնելը:

Ե. Քրեակատարողական հիմնարկների վարչակազմը

31. Դատախազները եթե քրեակատարողական հարցերում գործառույթներ ունեն, պետք է.

- հաշվի առնեն Եվրոպայի խորհրդի գործիքները, այդ թվում *Խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի հանձնարարականները*, մասնավորապես՝ ազատագրկման պայմանների վերաբերյալ: Երբ դատախազները իրազեկվում են հանձնարարականների խախտումների մասին, նրանք պետք է դիմեն իրավասու մարմնին: Օրինակ, Գլխավոր դատախազը խորհրդարանին ներկայացվող իր ամենամյա զեկույցում կամ մեկ այլ միջոցառման ժամանակ պետք է առաջարկի այն միջոցները, որոնք պետք է ձեռնարկվեն հանձնարարականները կատարելու համար,
- ապահովեն օրենքի գերակայությունը երկու տարբեր տեսակյուններից. մի կողմից պետք է ապահովեն ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանու, որպեսզի չգերազանցվի օրենքով նախատեսված պատժաչափը, մյուս կողմից՝ պետք է ապահովեն հասարակության պաշտպանությունը, որպեսզի պատիժը կիրառվի ամբողջովին օրենքի սահմաններում:
- ապահովեն արդյունավետ պաշտպանություն, քանի որ նրանք ունեն ազատագրկման վայրեր ազատ մուտքի հնարավորություն, կարող են այցելել ազատագրկման վայրեր պարբերաբար և ունեն անմիջապես գործելու հնարավորություն:

III. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

32. Անկախ անդամ-պետության իրավական համակարգի տեսակից, մարդու իրավունքների վիճակի ուսումնասիրությունը պետք է լինի առաջնահերթություն, որի միջոցով ապահովվում է օրենքով նախատեսված և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում ամրագրված դրույթների կիրառումը:

33. ԵԳԽԽ նկատել է, որ մի շարք անդամ պետություններում դատախազները կարևոր դեր ունեն պատիժների կիրառման և ազատագրկման օրինականության նկատմամբ հսկողության և ազատագրկման վայրերում դատապարտյալների վիճակի ոլորտում: Կան նաև պետություններ, որտեղ դատախազները այս ոլորտում լիազորություններով օժտված չեն, դրանք վերապահված են մեկ այլ պետական մարմնի, որն էլ վերահսկում է ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանությունը:

34. ԵԳԽԽ գտնում է, որ քրեակատարողական հիմնարկները պետք է ունենան համապատասխան նյութական և մարդկային ռեսուրսներ, որպեսզի կարողանան ապահովել ազատագրկման պատշաճ պայմանները և դատապարտյալների հետագա վերադարձը ազատ հասարակություն:

35. Այն անդամ-պետությունների վերաբերյալ, որտեղ դատախազները որոշակի դերակատարում ունեն ազատագրկման հարցերում, ԵԳԽԽ-ն եկել է հետևյալ եզրակացության.

ա/ Դատախազները, որոնք ներգրավված են այս ոլորտում, պետք է տիրապետեն համապատասխան ֆինանսական և մարդկային ռեսուրսների, որպեսզի կարողանան արդյունավետ կատարել իրենց պարտականությունները,

բ/ Ըստ աշխատանքի ծավալի, դատախազություններում պետք է գործեն համապատասխան ստորաբաժանումներ, որոնք աշխատելու են քրեակատարողական հիմնարկների վարչակազմերի հետ,

գ/ Անհրաժեշտության դեպքում, պետք է մշակվեն լավագույն պրակտիկայի և հանձնարարականների ուղենիշեր, որոնք կսահմանեն դատախազների գործունեության ընդհանուր սկզբունքները,

դ/ անդամ պետությունները պետք է կազմակերպեն վերապատրաստման դասընթացներ այն դատախազների համար, ովքեր ներգրավված են տվյալ ոլորտում և աշխատում են քրեակատարողական հիմնարկների վարչակազմերի հետ,

ե/ Իրենց պարտականությունները կատարելիս՝ դատախազները պետք է հարաբերություններ ստեղծեն և զարգացնեն մարդու իրավունքների պաշտպանի կամ նմանատիպ այլ ինստիտուտների և մարմինների հետ, որոնք ներգրավված են վերականգման և վերահնտեգրման գործընթացներում, ինչպես նաև քաղաքացիական հասարակաթյան, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների հետ:

36. ԵԴԽԽ-ն գտնում է, որ բոլոր իրավասու մարմինները , այդ թվում՝ դատախազները, պետք է միջոցներ ձեռնարկեն ազատությունից զրկված անձանց վիճակի բարելավման, ինչպես նաև դեպի ազատ հասարակություն նրանց վերադարձը ապահովելու համար:

37. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի պատժի իրականացման համար պատասխանատու մարմինները ապահովեն պատժի կիրառմանն առաջադրված բոլոր պահանջները՝ պաշտպանել մարդու արժանապատվությունը և մշտադիտարկել ազատազրկված անձանց իրավունքները և պայմանները:

38. Անդամ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն, որպեսզի ազատազրկման ընթացքում տեղ գտած իրավախախտումների վերաբերյալ հայտարարությունները ենթարկվեն պատշաճ քննության:

ՀԱՎԵԼՎԱԾ

Տարբեր իրավական համակարգերի նկարագրությունը և բանտային հարցերով դատախազների լիազորությունների տարբերությունները (ըստ հարցաշարին տրված պատասխանների).

1. Հարցաշարին պատասխանել են 25 պետություններ, որոնցից մի մասում դատախազությունների գործառույթների մեջ է մտնում քրեակատարողական հիմնարկների նկատմամբ հսկողությունը: Միաժամանակ, շատ պետություններում դատախազների գործառույթները այս ոլորտում սահմանափակվում են ազատազրկման վայրերում գտնվող անձանց իրավունքների պաշտպանությամբ:

2. Քննարկվող ոլորտում դատախազների լիազորությունները տարբեր պետություններում տարբեր են՝ սկսած քրեակատարողական հիմնարկների նկատմամբ ամբողջական հսկողությունից մինչև քրեակատարողական հիմնարկների նկատմամբ հսկողական

գործառույթների լիակատար բացակայություն: Այս տեսանկյունից բոլոր անդամ պետությունները կարող են բաժանվել 3 հիմնական խմբերի.

1/ երկրներ, որտեղ դատախազությունները հսկողություն են իրականացնում քրեակատարողական հիմնարկների նկատմամբ,

2/ երկրներ, որտեղ դատախազները ունեն սահմանափակ լիազորություններ ազատագրկման վայրերի նկատմամբ հսկողություն իրականացնելու ոլորտում,

3/ երկրներ, որտեղ դատախազները նշված ոլորտում լիազորություններ չունեն:

3. Այն երկրներում, որտեղ դատախազները ունեն քրեակատարողական հիմնարկների, ազատագրկման վայրերի, նախնական կալանքի վայրերի և պատիժների կիրառման այլ վայրերի վարչակազմերի կողմից օրենքների կիրառման նկատմամբ հսկողություն իրականացնելու ամբողջական լիազորություններ, նրանք նաև վերահսկողություն են իրականացնում ազատագրկված անձանց իրավունքների և պարտականությունների նկատմամբ:

4. Ազատագրկման տեսքով պատիժը կրող անձանց, ինչպես նաև ժամանակավորապես կալանքի տակ գտնվող անձանց նկատմամբ օրենքի խախտումները կանխելու համար դատախազները որոշ երկրներում ունեն բավականին լայն լիազորություններ, նրանք կարող են անցկացնել քրեակատարողական ինստիտուտների անկախ ստուգումներ, քրեակատարողական հիմնարկների վարչակազմից պահանջել ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան ապահովել ձերբակալված անձանց, բերման ենթարկվածների, դատապարտյալների և հարկադիր միջոցների դատապարտված անձանց իրավունքների պաշտպանությունը, ստուգել վարչակազմի կողմից ընդունված հրամանների, կանոնների, որոշումների համապատասխանությունը ներպետական օրենսդրությանը:

5. Որոշ անդամ պետությունների օրենսդրությունները պահանջում են, որպեսզի դատախազները կատարեն քրեակատարողական հիմնարկների պարբերական ստուգումներ: Հաճախականությունը ըստ պետությունների տարբեր է՝ ամենօրյա այցելություններից մինչև այցելություններ երեք ամիսը մեկ անգամ: Որոշ պետություններում ստուգումների քանակը չի կարգավորվում և այս պետությունները սահմանափակվում են միայն դատախազներին տեսչական ստուգումներ կատարելու հանձնարարականներ տալով: Նման ստուգումներից հետո դատախազը ներկայացնում է հաշվետվություն կամ միջնորդություն հայտնաբերված

թերությունների վերաբերյալ և ուղարկում քրեակատարողական հիմնարկի ղեկավարությանը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև իրավասու մարմիններին:

6. Շատ պետություններում օրինականության հաստատման լավագույն միջոցը դատախազներին օժտելն է ցանկացած պահի ազատագրկման վայրեր այցելելու լիազորությամբ: Այս այցելությունների ընթացքում դատախազները հնարավորություն ունեն տեղում ծանոթանալ փաստաթղթերին, ստուգել ազատագրկված անձանց պայմանները և շփվել դատապարտյալների հետ ազատորեն և գաղտնի:

7. Որոշ պետություններում ազատագրկման վայրերի պայմանների ստուգումների քանակը և հաճախականությունը սահմանվում է օրենքով՝ սկսած շաբաթը մեկ անգամ կատարվող այցելություններից մինչև տարեկան չորս անգամ այցելություններ: Այլ պետություններում դատախազները պարտավորված են պարբերաբար հանդիպել դատապարտյալների հետ: Միաժամանակ, եթե առկա է դատապարտյալի կամ ձերբակալված անձի բողոքը պայմանների վերաբերյալ, կարող է ստեղծվել ժամանակավոր հանձնաժողով՝ այդ բողոքը ուսումնասիրելու համար: Պետությունների երրորդ խմբում հանդիպման պատճառ է հանդիսանում դատապարտյալի հայտարարությունը կամ դիմումը: Գատապարտյալները կարող են դիմել դատախազներին իրենց իրավունքների ոտնահարման հայտարարությամբ, բայց դիմումները կարող են լինել նաև այլ բնույթի, օրինակ, դատապարտյալին այլ բանտ տեղափոխելու խնդրանքով՝ նրա անվտանգությունը ապահովելու նպատակով:

8. Այն պետություններում, որտեղ դատախազները օժտված են սահմանափակ լիազորություններով քրեակատարողական հիմնարկներում հսկողություն իրականացնելու ոլորտում, դատախազների և դատապարտյալների միջև հաղորդակցությունը չի բացառվում: Նմանատիպ պետություններում, հաղորդակցության նախաձեռնողը դատապարտյալն է կամ ձերբակալված անձը, նրանք դատախազին դիմում են դիմումով դաժան վերաբերմունքի կամ մարդու իրավունքների այլ ոտնահարման մասին: Որպես կանոն, նմանատիպ հանդիպումների վերաբերյալ իրավական կարգավորման բացակայության պարագայում նույնիսկ, եթե անհրաժեշտ է, դատախազները կարող են հանդիպել դատապարտյալների հետ՝ պահպանելով գաղտնիությունը:

9. Այն երկրներում, որտեղ դատախազները լիազորություններ ունեն ազատագրկման վայրերի նկատմամբ հսկողություն իրականացնելու ոլորտում, դատախազները պաշտոնյաներից կարող են բացատրություններ պահանջել, կասեցնել վարչակազմի անօրինական

հրամանների և որոշումների կատարումը, չեղյալ համարել սանկցիաները, որոնք դատապարտյալների կամ ձերբակալվածների նկատմամբ կիրառվել են օրենքի խախտումով: Շատ երկրներում, որտեղ դատախազությունները օժտված են լայն իրավասություններով այս ոլորտում, դատախազները իրավունք ունեն անմիջապես ազատ արձակել անձանց, որոնք առանց իրավական պատճառների պահվում են պատժի կիրառման հաստատություններում, կամ որոնք անօրինական ենթարկվել են կալանավորման կամ մինչդատական կալանքի:

10. Մարդու իրավունքների խախտումը պատժի կիրառման կամ մինչդատական կալանքի ընթացքում հիմք է հանդիսանում դատախազի միջամտության համար: Քրեակատարողական հաստատությունների վարչակազմերի գործողություններին դատախազների միջամտության արդյունավետությունը և բնույթը տարբեր պետություններում տարբեր են: Շատ պետություններում ազատագրկման կամ կալանքի վայրերում մարդու իրավունքների խախտումները դատախազներին իրավունք են տալիս նախաձեռնել անկախ քննություն, որի արդյունքում կայացվում է որոշում մեղավոր պաշտոնյաներին կարգապահական, վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու մասին: Նույնիսկ այն երկրներում, որտեղ ազատագրկման և կալանքի վայրերում դատախազները չունեն ազատագրկման կամ կալանքի վայրերի նկատմամբ հսկողության լիազորություններ, դատախազները օժտված են քրեակատարողական հաստատություններում մարդու իրավունքների պաշտպանության լիազորություններով:

11. Անդամ պետությունների մեծամասնությունում դատախազները չունեն մեղավոր պաշտոնյաներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու անկախ լիազորություններ: Եթե քննության ընթացքում հայտնաբերվել են կարգապահական խախտումներ, դատախազները կարող են դիմել պետական մարմնին, որն օժտված է ազատագրկման կամ կալանքի վայրերի աշխատակիցների նկատմամբ սանկցիաներ կիրառելու իրավասությամբ: Որոշ պետություններում դատախազները օժտված են կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորությամբ:

12. Դատախազները օժտված են առավել լայն իրավասություններով քրեակատարողական հիմնարկներում քրեորեն պատժելի արարքներ հայտնաբերելու դեպքում: Նման իրավիճակում դատախազները կարող են հարուցել քրեական գործ և կատարել անկախ քննություն: Պատահական մահվան, դատապարտյալների նկատմամբ կամ դատապարտյալների կողմից այլ դատապարտյալների նկատմամբ կամ բանտային աշխատակազմի նկատմամբ կատարված հանցագործությունների դեպքում դատախազը պետք է միջամտի: Պետություններից մեծ մասի օրենսդրությունը դատախազներին իրավունք

է վերապահում կատարել անկախ քննություն կամ քրեական գործը տեղափոխել քնչական մարմին՝ պահպանելով հսկողություն իրականացնելու իրավունքը:

13. Եթե հայտնաբերվել են քրեակատարողական հաստատությունների աշխատակիցների կողմից դատապարտյալների կամ կալանքի տակ գտնվող անձանց նկատմամբ մարդու իրավունքների խախտման դեպքեր, որոշ պետություններում դա կարող է հիմք հանդիսանալ, որպեսզի դատախազները վնասի վերականգման քաղաքացիական հայց ներկայացնեն:

14. Այն պետություններում, որտեղ դատախազները օժտված են քրեակատարողական հիմնարկների նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորությամբ, նրանք մեծ դեր ունեն քրեակատարողական հաստատությունների պայմանները միջազգային ընդունված չափանիշներին համապատասխանեցնելու հարցում:

15. Որոշ պետություններում դատախազները ունեն նաև լրացուցիչ լիազորություններ. որոշում են կայացնում պատժի չափի վերաբերյալ, մասնակցում են դատապարտյալի տեղափոխման վերաբերյալ քննարկումներին, անվտանգությունն ապահովելու համար սահմանափակումներ են դնում դատապարտյալի պայմանների վրա, որոշում են կայացնում այն մասին, թե կարող է արդյոք դատապարտյալը լքել քրեակատարողական հաստատությունը արտակարգ իրավիճակներում, համապատասխան մասնագիտացման բժիշկ են հրավիրում ազատությունից զրկված անձին հետազոտելու համար: Մի շարք պետություններում, որտեղ դատախազները քրեակատարողական հիմնարկների նկատմամբ ունեն սահմանափակ լիազորություններ, դատախազները իրավունք ունեն քննարկել ձերբակալված անձանց պահելու պայմանները, այդ թվում՝ մեկուսացման աստիճանը, շփումների և հաղորդակցության միջոցների սահմանափակումը:

16. Տարբեր պետություններում դատախազների լիազորությունները քրեակատարողական հաստատությունների նկատմամբ սահմանափակվում են միայն ձերբակալվածներին պահելու վայրերով: Նման դեպքերում դատախազը իրավասություն ունի մինչդատական կալանքի օրինականությունը հաստատելու նպատակով փաստաթղթերը ստուգելու լիազորություն, կարող է այցելել վերը նշված հաստատություններ ցանկացած պահի, առանց սահմանափակման շփվել ազատությունից զրկված անձանց հետ: Ավելին, որոշ պետություններում դատախազները կարող են որոշումներ ընդունել կալանավորման վերաբերյալ, ինչպես նաև որոշումներ կայացնել հատուկ միջոցների կիրառման վերաբերյալ այն անձանց նկատմամբ, որոնք նախնական կալանքի ընթացքում ռիսկի տակ են գտնվում քրեական համայնքներում:

17. Պետությունների մեծ մասում անձանց կալանավորման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու ժամանակ դատախազները անկախ են այլ պետական մարմիններից: Համարյա բոլոր պետություններում դատախազությունը միասնական կենտրոնացված համակարգ է և իրենց պարտականությունները կատարող դատախազները ենթարկվում են գլխավոր դատախազին:

18. Որոշ դատախազություններ մասնակցում են համաներման հարցերի քննարկումներին: Հաճախ, երբ այս ընթացակարգը կիրառվում է, դատախազները իրենց կարծիքն են արտահայտում դատապարտյալների նկատմամբ համաներում կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ: Մի շարք պետություններում դատախազների լիազորությունները ներառում են նաև համաներում կիրառելու մասին որոշման օրինականության նկատմամբ հսկողություն:

19. Մեծ կարևորություն ունեն դատախազությունների լիազորությունները ազատագրկման վայրերից դատապարտյալներին պայմանական ազատելու հարցում: Նման դեպքերում, որպես կանոն, դատախազի լիազորությունները չեն սահմանափակվում միայն միջոցառությունը ներկայացնելով կամ դատարանի առջև պայմանական ազատման հնարավորության մասին հայտարարություն նախապատրաստելով: Որոշ պետություններում դատախազները կարող են մասնակցել հատուկ հանձնաժողովի նիստին կամ պայմանական ազատման հարցով դատական լսումներին և կարող են հսկողություն իրականացնել նման ազատ արձակման օրինականության նկատմամբ:

20. Որոշ պետություններում դատախազությունը կարող է բողոքարկել պատժի /մեղավոր ճանաչելու/ կիրառման հարցերով կայացված որոշումները: Նման դեպքերի քննարկման ժամանակ դատախազները իրավունք ունեն մասնակցել դատական լսումներին՝ հնարավորություն ունենալով նաև ներկայացնել նյութեր և միջոցառություններ և այլն:

21. Որոշ անդամ պետություններում դատախազությունը համագործակցում է հանրային մարմինների հետ, որոնք աշխատում են ազատագրկման վայրերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Մի շարք պետություններում օրենքները կարգավորում են դատախազության և մարդու իրավունքների պաշտպանի /օմբուդսմանի/ միջև փոխհարաբերությունները: Անդամ պետություններում այս համագործակցությունը ունի երկու հիմնական ուղղություն. առաջինը՝ ՄԻՊ-ի կողմից տրամադրված տեղեկատվությունը, որը

կարող է հիմք հանդիսանալ դատախազական ստուգում անցկացնելու համար, երկրորդը՝ ազատագրկման վայրերում մարդու իրավունքների խախտումները վերացնելու ուղղությամբ դատախազների գործունեության արդյունքները ներկայացվում են մարդու իրավունքների պաշտպանին:

ՀՂՈՒՄՆԵՐ

¹Նախարարների տեղակալների 1099-րդ հանդիպում (2010թ. նոյեմբերի 23-ին):

²Սույն Կարծիքի Հավելվածը, ինչպես նաև անդամ պետությունների կողմից հարցաշարին տրված պատասխանները կարող եք ծանոթանալ ԵԴԽԽ-ի կայքում՝ www.coe.int/ccpe:

³ Մասնավորապես տե՛ս Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի (թիվ 25803/94), Ակսոյը ընդ. Թուրքիայի (1996թ. դեկտեմբերի 18) և Այդընը ընդդեմ Թուրքիայի (1997թ. սեպտեմբերի 25):

Ջալոտի ընդդեմ Գերմանիայի ⁴Մասնավորապես տե՛ս (թիվ 548110/00) Օլգեվսկին ընդդեմ Լեհաստանի (2003թ. նոյեմբերի 13), Լաբիթան ընդդեմ Իտալիայի (թիվ 26772/95), Կանտիրևը ընդդեմ Ռուսաստանի (2007թ. հունիսի 21), Օրչովսկին ընդդեմ Լեհաստանի (թիվ 17885/04) և Նազարենկոն ընդդեմ Ուկրաինայի (2003թ. ապրիլի 29):

⁵ Մասնավորապես տե՛ս Վլասովը ընդդեմ Ռուսաստանի (2008թ. հունիսի 12), Օստրովարը ընդդեմ Մոլդովայի (2005թ. սեպտեմբերի 13), Էնիան ընդդեմ Իտալիայի (2009թ. սեպտեմբերի 17):

⁶ Մասնավորապես տե՛ս Կայան ընդդեմ Թուրքիայի (1998թ. փետրվարի 19), Մելնիկը ընդդեմ Ուկրաինայի (2009թ. սեպտեմբերի 17):

⁷ Նաև տե՛ս Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող այլ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիան, Բանտերում կրթության վերաբերյալ Թիվ(89)12 հանձնարարականը, Բանտերում վարակիչ հիվանդությունների, այդ թվում՝ ՉԻԱՀ-ի և դրանց հետ կապված առողջական խնդիրների քրեագիտական և բանտային առանձնահատկությունների վերաբերյալ Թիվ(93)6 հանձնարարականը, Սանկցիաների և միջոցների կիրառման համար պատասխանատու անձնակազմի վերաբերյալ Թիվ(97)12 հանձնարարականը, Բանտերում առողջապահության կազմակերպման էթիկական և կազմակերպչական ասպեկտների վերաբերյալ Թիվ(98)7 հանձնարարականը, Բանտերի գերծանրաբեռնված լինելու և բանտերում դատապարտյալների թվի աճի վերաբերյալ Թիվ(99)22 հանձնարարականը, Պայմանական ազատման վերաբերյալ Թիվ(2003)22 հանձնարարականը, Բանտերի վարչակազմերի կողմից ցմահ դատապարտվածների և երկարաժամկետ պատիժ կրողների կառավարման վերաբերյալ Թիվ(2003)23 հանձնարարականը:

⁸ Մասնավորապես տե՛ս 1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային համաձայնագիրը, Ազատագրկվածների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն չափանիշները (1955թ.), Դատախազների դերի վերաբերյալ ուղեցիշերը (1990), Ազատագրկված անչափահասների պաշտպանության ՄԱԿ-ի կանոնները (1990):

⁹ Մասնավորապես տե՛ս Դատախազների միջազգային ասոցիացիայի կողմից 2005թ. ընդունված՝ Դատախազների մասնագիտական պատասխանատվության չափանիշները և դատախազների լրացուցիչ պարտականությունների և իրավունքների սահմանումը:

¹⁰ Տե՛ս Քրեական արդարադատության ոլորտում դատախազների դերի վերաբերյալ Նախարարների կոմիտեի կողմից անդամ պետություններին տրված՝ Թիվ(2000)19 հանձնարարականը:

¹¹ Թիվ(2006)2 հանձնարարականի 4-րդ կետի համաձայն, «Դատապարտյալների իրավունքները ոտնահարող բանտային պայմանները չեն կարող հիմնավորվել ռեսուրսների պակասով»: Ելնելով հանձնարարականով սահմանվող քաղաքականությունից և պրակտիկայից, օրենքից շեղվող գործողությունները անթույլատրելի են: Եթե օրենքի նման խախտումները հայտնաբերվում են, համաձայն հանձնարարականի 92 և 93 կետերի, պետք է ձեռնարկվեն գործողություններ դրանք դադարեցնելու նպատակով (դատախազական ստուգումների միջոցով):